



ԵՐԿՈՒՇԱՔԹԻ, 22 ՓԵՏՐՈՒԱՐ, 2016

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն Կբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալ Կիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՐՄՈՍ 128

ԱՍՏՈՒԱԾԱՇԱԽ ՄԱՐԴՈՑ ՎԱՐՁԱՏՐՈՒԹԻՒՆԸ

Երանի՛ աստուածավախ մարդոց,
անոնց, որոնք Տիրոջ կամքին համաձայն կ'ապրին:
Եթէ դուն այսպէս ապրիս՝
աշխատանքիդ արդիւնքը պիտի վայելես,
երջանիկ պիտի ըլլաս եւ բարի օրեր տեսնես:
Կինդ պտղալից որթատունկ մը պիտի ըլլայ տանդ մէջ,
գաւակներդ՝ ձիթենիի նոր տունկերու պէս, սեղանիդ շուրջ:
Ահա այսպէս կ'օրհնուի Տիրոջը երկիւղը ունեցող մարդը:

ՇԱՐԱԿԱՆ - ԱՊՈԹՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Ամենատարբ Երրորդութիւն, սուր աշխաՀիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

ԱՊՈԹՔ

*Պահապան ամենայնի Զրիստոս,
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի ճանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

ՕՐՈՒՄՆ ՆԻԺԹԸ



ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒՄԸ ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԸ (ԳԼԽ 7:1-40)



ԱՄՈՒՍՆՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԿ ՀԱՐՑԵՐ (7:1-7)

«Ոչ թե արգելքներ կը դնեմ ձեր վրայ, այլ կ'ուզեմ որ պարկեշտությամբ եւ անզբաղ մտքով Տիրոջ հնազանդության նուիրուիք» (7:35):

Պօղոս Առաքեալ արժարժել էր Կորնթոսի եկեղեցւոյ մէջ ծագած անկարգութեան վերաբերեալ հարցերը, կ'անցնի պարասխանելու այն հարցերուն, որոնք իրեն հասած էին համայնքէն գրաւոր կերպով, նամակի ճամբով. «Ձեր նամակին մէջ ինձի գրած էիք...» (7:1), «Անուրիներուն վերաբերող ձեր հարցումին...» (7:25):

Այս գլուխէն սկսեալ (7րդ) Առաքեալը պիտի սկսի անդրադառնալ հետեւեալ հարցերուն.

1. Ամուսնութիւն, ամուրիութիւն եւ անոնց կապուած հարցեր.
2. Կուռքերու զոհուած ուրելիքներ ուրել կամ ոչ.
3. Պաշտամութեան ընթացքին կիներ իրենց գլուխները ծածկեն կամ ոչ.
4. Հաղորդութեան խորհուրդի կատարման ժամանակ անկարգութիւններ.
5. Հոգեւոր պարգեւներ.
6. Մեռելներուն յարութեան հարցը.

1. Ամուսնութիւն, ամուրիութիւն եւ անոնց կապուած հարցեր

Այս բաժինը ինքնին կը բաժնուի քանի մը մասերու.

ա. Արդեօք ամուսնական կապը խզել հոգեւոր նպատակներու համար (7:1-7):

բ. Աւելի աղէկ է չամուսնանալ (7:8-9):

գ. Ի՞նչ ընել եթէ ամուսնացողներէն մէկը քրիստոնէայ է, իսկ միւսը հեթանոս (7:10-16):

դ. Մնալ այնպէս ինչպէս Աստուած կանչած է (7:17-24):

դ. Կուսութեան մասին ի՞նչ ըսել (7:25-35):

ե. Խօսեցեալներ (7:36-38):

զ. Այրիացեալ կին մը ազա՛ր է վերստին ամուսնանալու (7:39-40):

«Ձեր նամակին մէջ ինձի գրած էիք» (1հմր): Այս արտայայտութիւնը ցոյց կու տայ, թէ համայնքէն ներս արժարժուած էին հարցեր, այս պարագային ամուսնութեան հետ կապուած, որոնց համար կը դիմեն Պօղոս Առաքեալին, որպէսզի բարոյ լուծում տայ իրենց: Կորնթոսի պէս քաղաք, զեղի կեանքով յարկանշուած, քրիստոնէաներէն ոմանք կը դժուարանային կարծէք ամուսնական կեանքին մէջ մնալու, որպէս արգելք հոգեւոր կեանքին: Անոր համար ալ կ'ըսեն. «Աւելի լաւ է բնաւ չամուսնանալ» (1հմր): Ընդհանուր հաստատում մը չէ, որ Առաքեալը կ'ընէ կամ կ'օգտագործէ, այլ համայնքէն եկած կացութեան մը պարասխան է որ պիտի տայ: Առաքեալը երբեք չարհամարհեր ամուսնական կեանքը, այլպէս ինքզինք հակասած պիտի ըլլար երբ կը գրէ Եփեսացիներուն նամակը եւ կ'ըսէ. «Այրեր, սիրեցէք ձեր կիները, այնպէս ինչպէս Քրիստոս սիրեց իր եկեղեցին» (Եփես 5:25): Առաքեալը պարզապէս աւելի աղէկ կը համարէ առանձնութիւնը, մանաւանդ եթէ երբեք կը նպատակադրէ Աստուծոյ ծառայութեան նուիրուելու:

Այլապէս կը շարունակէ. «Բայց որպէսզի պռոնկութեան մէջ չիյնաք՝ ամէն մարդ թող իր կինը ունենայ եւ ամէն կին՝ իր ամուսինը» (2 հմր): Ահա անմիջապէս Առաքեալը կը զգուշացնէ այն հաւանական մեղքէն, որ կրնայ յառաջ գալ: Ուրեմն պէտք է հպարակիլ բնութեան պահանջներուն, որպէսզի անով մեղքը չիշխէ անոնց վրայ: Միւս կողմէ նաեւ չմոռնալ Աստուածահիմն այն պարտիրանը որ փրուեցաւ մարդուն. «անեցէք, շարցէք երկիրը լեցուցէք» (Ծննդ 1:28): «Աղէկ չէ որ Ադամ մինակ մնայ. անոր օգնական մը ընեմ իրեն յարմար» (Ծննդ 2:18):

Ինչո՞ւ, «Որպէսզի կնոջ պէքերը այրը զոհացնէ եւ այր մարդուն պէքերը՝ կինը» (3 հմր): Այս նախադասութեամբ Պօղոս Առաքեալ ցոյց կու տայ պարտաւորութեան ու իրաւունքի բաժինը, թէ իրաքանչիւրը իր պարտականութիւնն ու իրաւունքը ունի, որուն ըստ այնմ պէտք է նկատի ունենալ եւ յարգել:

Որովհետև «կինը իր մարմինն փերը չէ, այլ՝ ամուսինը. ոչ ալ այրը իր մարմինն փերն չէ, այլ՝ կինը» (4 հմբ): Բայց չէ որ երկուքին ալ պարագային Պօղոս Առաքեալ պիտի ըսէ. «գիտցէք որ դուք չէք ձեր անձերուն փերը, այլ Աստուած՝ որ փրկագինով ձեզ գնեց» (6:19-20): Ուրեմն հիմա ո՛վ է փերը: Այս արտայայտութեամբ Առաքեալը ամուսնական կեանքը այնպէս մը կը ներկայացնէ, որ այդ կապը վերածուի ոչ թէ ֆիզիքական հաճոյքի կամ անձնական վայելքի, այլ պարտականութեան մը, եւ ըստ այնմ ամուսնութիւնը բարձրացնելու բնական մակարդակէն բարոյական մակարդակի:

«Երկար արեւն հեռու մի՛ մնաք իրարմէ: Եթէ կ'ուզէք աղօթքի նուիրուիլ, կրնաք փոխադարձ համաձայնութեամբ ժամանակ մը իրարմէ հեռու մնալ. բայց յետոյ վերադարձէք ձեր կենակցութեան, որպէսզի չըլլայ որ Տաքանան ձեզ փորձութեան մղէ՝ ձեր անժուժկալութենէն օգտուելով» (5 հմբ): Մա կը նշանակէ թէ ինչ որ ուրիշին է չտալը գրկել կը նշանակէ: Եթէ պարտքի ու իրաւունքի հարց կայ պէտք է կատարել: Այսպէս Առաքեալը երեք պարագաներ կը նշէ ժուժկալութեան համար:

1. Աղօթքի նուիրուիլ
2. Փոխադարձ համաձայնութիւն
3. Կարճ ժամանակի համար

Բայց անմիջապէս վերադարձէք, որպէսզի Չարը ձեզ փորձութեան չմղէ: Առաքեալին միակ մտա-հոգութիւնը մեղքէն հեռու մնալ, որովհետև պարճառ է մեզ հեռացնելու Աստուծմէ:

Այս բացատրութիւնը հրահանգ մը չէ, որ Առաքեալը կը փոխանցէ, այլ՝ հասկացողութիւն մը, որպէսզի գիրենք հեռու պահէ մեղքէ ու չարիքէ:

Առաքեալին փափաքն է, «Ամէն մարդ իրեն պէս ապրի, բայց Աստուած իրաքանջիւրին իրեն յարուկ շնորհք մը տուած է. մէկուն՝ այսպէս, միւսին՝ այնպէս» (7 հմբ): Այս արտայայտութիւնը նախ եթէ համեմատենք Առաքեալին մէկ այլ ուրիշ խօսքին հետ, որ կ'ըսէ. «ինձի նմանեցէք, ինչպէս ես՝ Քրիստոսի»: Ուրեմն, Առաքեալին փափաքն է որ մարդիկ իրեն պէս ըլլան, այսինքն՝ Քրիստոսի նմանութիւնը ունենան: Որովհետև այդ իսկ է կոչումը իրաքանջիւրին: Միւս կողմէ, եթէ խօսքը ինքն իր շրջագիծին մէջ ուզենք փեսնել, որ հարցը կը վերաբերի ամուսնանալու կամ ամուրի մնալու, այն արեւն Պօղոս Առաքեալ կը փափաքի որ իրեն պէս ըլլան առանձին, որպէսզի կարենան ամբողջութեամբ նուիրուիլ Աստուծոյ գործին, այլապէս աւելի լաւ է ամուսնանալ: Որովհետև, ի վերջոյ, Աստուած իրաքանջիւրին ըստ այնմ շնորհք տուած է: